ԻՋԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ[1]

Վլադիմիր Պողոսյան, Աշխեն Մկրտումյան

ՄՈՒՏՔ

ՀԽՍՀ հասարակական-քաղաքական գործընթացների հետազոտությունը, հատկապես հասարակության զարգացման առօրեական խնդիրները դարձել են ժամանակակից պատմագիտության քննության նյութ: Խորհրդային առաջին տարիներին հանրապետության տարածքը ենթարկվեց պարտադրված փոփոխությունների, որոնք նպաստեցին հայ հասարակության կազմակերպման, մշակութային դեմքի փոփոխության, ինդուստրիալ և վարչական նպատակահարմարությամբ քաղաքագոյացման, քաղաքային մշակույթի ձևավորման որոշակի միտումների ձևավորմանը: Ժողովրդագրությունն այն մատչելի գործիքն է, որը հնարավոր է դարձնում տարբերակել և գնահատել վերոնշյալ փոփոխությունների արդյունավետությունը, ժողովրդագրական տեղաշարժերի միտումները և հասարակության տրամադրվածությունը այդ փոփոխությունների նկատմամբ:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո որոշակի նախադրյալներ ձևավորվեցին հանրապետության ծայրամասային, սահմանամերձ բնակավայրերի զարգացման համար և այս առումով կարևորվեց վարչական բաժանման նոր սկզբունքները, որոնցում հաշվի էին առնվում առավելապես տնտեսական և ժողովրդագրական գործոնները:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին անցկացվեցին մի շարք մարդահամարներ (1922, 1926 թթ.), որոնք արտացոլեցին հանրապետության բնակչության թվական և սոցիալական կազմի փոփոխությունները: Հետագա՝ 1937, 1939 թթ. մարդահամարի տվյալային բազան և ժողովրդագրական հետազոտությունների մեթոդաբանական հարցերը դուրս մղվեցին գիտական և մամուլի հանդեսներից, և այս առումով 1930-ականների պատկերը կոնկրետացված և տվյալային է:

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ՝ ԵՊՀ ՆՄ-22-03-58/5 վերնագրով թեմայի շրջանակներում:

Իջևանի քաղաքայնացման գործընթացի ժողովրդագրական բաղադրիչի ուսումնասիրության նպատակն է բացահայտել Իջևանի բնակչության ժողովրդագրական աճի միտումներն ու օրինաչափությունները՝ հիմքում ունենալով 1920-1930-ական թթ. մարդահամարների արդյունքները: Վերոնշյալ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

1. Բացահայտել վարչատարածքային վերափոխումների և բնաշխարհագրական գործոնների ազդեցությունը Իջևանի բնակչության աճի միտումներում:
2. Ուսումնասիրել 1920-1930-ական թթ-ին հանրապետական ուրբանիզացման պետական քաղաքականության շեշտադրումները, ներքին միգրացիոն գործընթացները, արդյունաբերական շրջանների ձևավորման և բնակչության բաշխման միտումները:
3. Վերլուծել Իջևանի ժողովրդագրական իրավիճակը՝ շրջանային ցուցանիշների համադրությամբ և տալ բնակավայրի բնակչության աճի ցուցանիշների փոփոխությունը՝ հիմքում ունենանալով յուրաքանչյուր հերթական մարդահամարի արդյունքերի համեմատությունն ու համադրությունը:

Գիտական հոդվածի մեթոդական հիմքում ընկած են օբյեկտիվության և պատմականության սկզբունքները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի և առաջարկվող տարածքային միավորի (Իջևան բնակավայրի) ժողովրդագրական գործընթացների նմանություններն ու տարբերությունները բացահայտելու նպատակով օգտագործել ենք պատմահամեմատական և խնդիր-ժամանակագրական մեթոդները:

Կատարված հետազոտությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել Իջևանի ժողովրդագրական զարգացման միտումները 1920-30-ական թթ-ին և գիտական շրջանառության մեջ դնել փաստական նյութեր և վերլուծություններ, որոնք պարունակում են նորույթ քաղաքատիպ բնակավայրի բնակչության աճի, թվաքանակի, բնական և մեխանիկական շարժման, սեռի, տարիքի և ազգային կազմի շարժընթացի մասին:

Իջևանի բնակչության բնական և մեխանիկական շարժընթացը 1920-ական թվականներին

Խորհրդային իշխանության ձևավորմանը զուգընթաց՝ ՀԽՍՀ Հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 26-ի դեկրետով չեղարկեց հանրապետության

վարչատարածքային բաժանման նահանգա-գավառային սկզբունքը և “բոլոր գաւառական Յեղկոմներն և Արարատեան նահանգի Յեղկոմի մինչև այսօր ենթակա հիմնարկութիւններն այսուհետև ենթարկւում են անմիջականորէն ՀԽՍՀ կենտրոնական իշխանության»[1]: Այս որոշումը պայմանավորված էր ինչպես նոր վարչակարգի ամրապնդման, այնպես էլ սոցիալական բնույթի ծառացած խնդիրները թեթևացնելու համար: Խորհրդային Հայաստանի նոր վարչական բաժանման հարցը ուրվագծվեց ՀԽՍՀ կառավարության 1921 թ. հուլիսի 20-ին ընդունված որոշմամբ, համաձայն որի, Խորհրդային Հայաստանը վարչականորեն բաժանվում էր 8 գավառի՝ ընդհանուր 33 գավառամասով[2]: Գավառները հետևյալն էին՝ Երևանի[3], Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու (Ջալալօղլու), Իջևանի, Նոր-Բայազետի և Դարալագյազի: Իջևանի գավառի մեջ մտնում էին Իջևանի, Դիլիջանի, Կոթիքենդի (Կոթիի), Շամշադինի (Տավուշի) և Կարմիր (Ճամբարակի) գյուղի գավառամասերի[4]: Ընդամենը մեկ տարի անց Իջևանի գավառը վերակազմավորվեց Դիլիջանի գավառ՝ չկրելով գավառամասային փոփոխություններ[5]:

Խորհրդային իշխանության ձևավորման, կայացման սկզբնական էտապում առկա էր ներքաղաքական խոչընդոտների մի ամբողջ շրջանակ, որը դրսևորվեց նախկին իշխանությունների կողմից կազմակերպված Փետրվարյան ապստամբությամբ, Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելու գործողություններով, որոնք թույլ չտվեցին նոր ձևավորված իշխանության մարմիններին վիճակագրական հստակությամբ պատկերացում կազմել Հայաստանի մարդկային, նյութական և հումանիտար ռեսուրսների մասին: Արդեն 1922 թ. որոշակի քայլեր կա-

---

1 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, Էջմիածին, 1921, էջ 29:

2 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, Էջմիածին, 1921, էջ 83-84:

3 Երևան քաղաքը Երևանի գավառի մեջ չէր մտնում և վարչական տեսանկյունից հանդիսանում էր գավառի համարպատասխան առանձին վարչական միավոր:

4 Նույն տեղում:

5 Հարությունյան Հ., Նոր-Բայազետի գավառը Խորհրդային Հայաստանի վարչատարածքային բաժանումներում (1920-1930թթ.), էջ 169:
Ըստ պատմաբան Համլետ Հարությունյանի՝ 1922 թ. դրությամբ Խորհրդային Հայաստանը վարչականորեն բաժանված էր 10 գավառի և 41 գավառամասի (շրջանի): Գավառներն էին՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Լոռիի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Ղարաքիլիսայի, Էջմիածնի, Դարալագյազի, Զանգեզուրի, Մեղրիի:

տարվեցին այս ուղղությամբ և Զավեն Կորկոտյանի բնորոշմամբ “խորհրդային իշխանության շինարարության աշխատանքը փաստացիորեն սկսված ե 1922 թվից, յերբ և կատարվել ե խորհրդային իշխանության առաջին գյուղատնտեսական վիճակագրությունը»[1]: 1922 թ. վիճակագրության միտվածությունը ավելի շատ մարդկային ռեսուրսների բացահայտման և բնակչության տարիքային կազմի որոշման խնդիր էր հետապնում, և ինչպես որոշ հետազոտողներ արդարացիորեն գտնում են, լինելով “թերի և մոտավոր»[2], այն ընդհանուր պատկերացում է տալիս բնակչության թվական և էթնիկական շարժերի շուրջ: Ըստ վերոնշյալ վիճակագրության, Իջևանի բնակչությունը կազմում է 2172 բնակիչ[3], իսկ շրջանում բնակչությունը կազմում է մոտ 13200 (համաձայն փաստաթղթի՝ 13260)[4]: Իջևան քաղաքատիպ բնակավայրի և շրջանի բնակչությունը, ի տարբերություն Դիլիջանի գավառի այլ գավառամասերի, լիարժեքորեն միատարր է, հայերի կազմում են բնաչկության 99 և ավելի տոկոսը, միայն Իջևանում բնակվում է 1 ռուս (22 ամյա, արական սեռի, հավանաբար գործուղղված պետծառայող)[5]:

Խորհրդային իշխանության և վարչաքաղաքական մարմինների ամրապնդմանը զուգընթաց 1926 թ. անցկացվեց խորհրդային առաջին համընդհանուր մարդահամարը, որն իր հետաքրքրությունների, հարցումների շրջանակով էապես տարբերվում էր 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության ներկայացված տվյալներից և առավելապես լույս է սփռում Խորհրդային Հայաստանի բնակչության ոչ միայն սեռատարի-

---

1 Կորկոտյան Զ., Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1929, էջ 19:

2 Սարգսյան Հ., Տավուշի մարզի բնակչությունը 19-21-րդ դարի սկզբների (Էթնոժողովրդագրական ուսումնասիրություններ), Տավուշ: Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն) / ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ. - Երևան, Գիտություն հրատ, 2014, էջ 40:

3 Հայաստանի ազգաբնակչությունը ըստ սեռի, գրագիտության յեվ ազգության, 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութեր, Յերեվան, 1924, էջ 20: Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.), Յերեվան, Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 1932, էջ 120-121: Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի, Յերեվան, 1923, էջ 50-51:

4 Նույն տեղում, էջ 62-63:

5 Նույն տեղում, էջ 20:

քային, կրթական համապատկերին, այլև ներկայացնում գյուղատնտեսական, արդյունաբերական, աշխատանքի վիճակագրությունը և այլն[1]: Համաձայն վիճակագրական տվյալների՝ ՀԽՍՀ տարածքը 1926 թ. դեկտեմբերի 17-ի կազմում էր 28845,9 ք/կմ (առանց Սևանա լճի, որի ավազանը կազմում էր 1401,7 ք/կմ, միասին **30247,6**), իսկ Դիլիջանի գավառը տարածքը՝ **3589** ք/կմ (Բարանայի՝ 524,4, Դիլիջանի՝ 669,9, Իջևանի՝ 891,1, Կարմիրգյուղի՝ 695,7, Շամշադինի՝ 807,9)[2]:

Համաձայն 1926 թ. անցկացված մարդահամարի՝ Իջևան քաղաքատիպ բնակավայրի բնակչությունը կազմում է 2261, ինչը նախորդ ցուցանիշը գերազանցում է 89-ով կամ 4 %-ով[3]: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ նույն փաստաթղթում Իջևանի բնակչության թվաքանակը 1923-ին հիշատակվում է 1875 կամ նախորդ տարվա ցուցանիշից բացասական տատանումը կազմում է 297 մարդ կամ մոտ 14 %[4]: Վերոնշյալ հանգամանքը հավանաբար պայմանավորված է համաճարակի տեղային օջախի բռնկմամբ և բնակչության բարձր մահացությամբ, քանի որ Դիլիջանի գավառի բնակչության 1923 և 1924 թվականների մահացության ցուցանիշը բավականին բարձր էր՝ համապատասխանաբար 954 և 1635, իսկ 1925 և 1926 թվականներին վերոնշյալ ցուցանիշը նվազում է՝ համապատասխանաբար 886 և 844[5]: Ինչ վերաբերում է Իջևանի գավառամասի ժողովրդագրական գործընթացներին, ապա պետք է նշել, որ 1922 թ. 13260 ցուցանիշը 1926-ին դարձավ 13559 կամ բնակչության աճը կազմեց 2,3 %, այն դեպքում, երբ հանրապետության միջինը կազմում էր 12,8%[6]: Խորհրդային Հայաստանի բնակչության այդօրինակ աճն ըստ տնտեսագետ, իրավաբան Պողոս Աբելյանի բացատրվում է «գլխավորապես բնակչության բնական աճմամբ: Ոչ մասսայական բնույթ կրող միգ-

---

1 Տե՛ս Խորհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու 1923-1927 թթ., Թիֆլիս, Տպ. Պոլիգրաֆ տրեստ առաջին, 1928:

2 Նույն տեղում, էջ 2-3:

3 Նույն տեղում, էջ 15:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ 22-23:

6 Սարգսյան Հ., Տավուշի մարզի բնակչությունը 19-21-րդ դարի սկզբների (էթնոժողովրդագրական ուսումնասիրություններ), էջ 43:

ռացիոն երևույթները Խորհրդային Հայաստանի բնակչության աճման մեջ փոքրիշատե զգալի դեր չեն խաղում»[1]:

Իջևանի բնակչության թվաքանակի և էթնիկական կազմի փոփոխությունը 1930-ական թվականներին

Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումից հետո հանրապետական իշխանությունների ուշադրության կենտրոնում էր նաև Հանրապետության նոր վարչատարածքային բաժանման հրամայականը, և 1929-1930 թթ. կենտրոնական մարմինների որոշմամբ հաստատվեց շրջանային վարչաբաժանումը, որը նպատակ էր հետապնդում զարկ տալ շրջանային մարմինների և դրանց հետ սերտորեն կապված գյուղխորհուրդների զարգացմանը[2]: Իջևանը, լինելով բավականին հարմար ֆիզիկա-աշխարհագրական տարածքում, ունենալով տեղագրական և վարչական ընդլայնման համար հարմարավետ տարածքային հնարավորություններ, դարձավ նոր ձևավորված Իջևանի շրջանի կենտրոնը: Շրջանի տարածքը զբաղեցնում էր ավելի քան 1140 ք/կմ, իսկ նրան ենթակա էր գյուղական բնակավայրերը՝ ավելի քանի 24[3]:

Նկատենք նաև, որ 1930-1939 թթ. Իջևանի շրջանը կրել է ինչպես տարածքային, այնպես էլ վարչական փոփոխություններ: Մասնավորապես՝ ՀԽՍՀ ԿենտԳործԿոմի 1930 թ. սեպտեմբերի 9-ին ընդունում է որոշում "Հայաստանի ՍԽՀ գավառները վերացնելու հետևանքով նոր շրջաններ կազմակերպելու սկզբունքների մասին», որի համաձայն վերաց-

---

[1] Աբելան Պ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը նախախորհրդային եւ խորհրդային շրջաններում (1 հունվարի 1914 թ. - 1 հունվարի 1930 թ.), Երեւան, 1930, էջ 9, 12: Աբելյանի գնահատմամբ անդրկովկասյան հանրապետությունների բնակչության 1923-1928 թթ-ի ընդհանուր աճման տեմպը ունի հետևյալ պատկերը՝ "Հայաստան՝ աճում է 5 տարում 20.5 % և տարեկան 4.1 %, Ադրբեջանը՝ 13.3% և տարեկան 2.66 %, Վրաստանը՝ 10.8 % և տարեկան 2.16 %: Այս 5 տարում Հայասանի բնակչության աճի միջին տարեկան տոկոսը բարձր է Ադրբեջանից 54 %-ով, Վրաստանից՝ 90 % և ամբողջ Անդրկովկասից՝ 58 %-ով»:

[2] Հարությունյան Հ., Նոր-Բայազետի գավառը Խորհրդային Հայաստանի վարչատարածքային բաժանումներում (1920-1930թթ.), էջ 175:

[3] ՀԽՍՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը 1935 թ-ի նոր սահմաններում և ըստ 1931 թ-ի մարդահամարի, Յերեվան, Հրատ Հայկենտգործկոմի, 1936, էջ 7:

վում են մի շարք շրջաններ, կազմակերպվում է Դիլիջանի շրջանը և վերջնականապես սահմանվում են Հայաստանի ԽՍՀ շրջանները[1]: Այս որոշմամբ կարգավորվում էր նաև շրջանների ստանդարտացումն ըստ բնակչության քանակի՝ մինչև 20 հազար, 20-40 հազար, 40 և ավելի հազար բնակիչ ունեցող շրջաններ և ըստ աստիճանակարգության՝ որոշարկվում էր տվյալ շրջանի շրջգործկոմի հաստիքացուցակը՝ 29, 38 աշխատակից ունեցող շրջաններ[2]: Ձևավորվեց նոր վարչատարածքային մոդելը, համաձայն որի ՀԽՍՀ վարչական տարածքը բաժանվեց 25 շրջանների և երկու քաղխորհրդի (Երևան և Լենինական), որոնք անմիջականորեն ենթարկվում էին հանրապետության կենտրոնական իշխանություններին: Իջևանի շրջանն ընդգրկված էր մինչև 20 հազար բնակիչ ունեցող շրջանախմբում և համապատասխանաբար Իջևանի շրջգործկոմի հաստիքները սահմանվում էին 29-ը[3]: Համաձայն որոշման՝ նոր ձևավորված Իջևանի շրջանն ուներ 24 բնակավայր՝ Ներքին Աղդան, Վերին Աղդան, Աչաջուր, Բաղանիս, Գետաշեն, Դոստլու, Թալա, Իջևան, Իջևանգէս, Լալիգեղ, Լուսաձոր, Խաշթառակ, Կոթիգեղ, Կոշկոթան, Մելիքգեղ, Ենոքավան, Ուզունթալա, Ջողազ, Ջուջևան, Ռևազլու, Սևքար, Սռիգեղ, Ոսկեպար, Տանձուտ (վերջինը հաշվառված է Սևքարի հետ և մտնում է նրա վարչական տարածքի մեջ)[4]:

ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահության 1935 թ. ապրիլի 22-ի որոշմամբ հաստատվեց և հրապակվեց ՀԽՍՀ բնակավայրերի լրիվ անվանացանկը, ինչպես նաև այդ որոշմամբ պարտավորեցնում էր “պետական և հասարակական բոլոր մարմիններին, կազմակերպություններին և հաստատություններին հետագայում անշեղ ղեկավարվել ՀՍԽՀ բնակավայրերի՝ սույն վորոշումով հաստատված անուններով (փոփոխված յեվ ուղղագրված)»[5]: Իսկ 1936 թ. լույս տեսավ նախատեսված վիճակագրական տեղեկատուն, որտեղ ներկայացված էին Խորհրդային Հայաստանի բոլոր բնակավայրերը՝ ըստ 1931 թ. մարդահամարի, որը «ՀՍԽՀ ազ-

---

1 “Խորհրդային Հայաստան», 21.IX. 1930:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 ՀԽՍՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը 1935 թ-ի նոր սահմաններում և ըստ 1931 թ-ի մարդահամարի, էջ 33:

5 Նույն տեղում, էջ 3:

գաբնակչության ամենավերջին լրիվ հաշվառքն ե ճանաչված ու հաստատված»[1]: Ինչպես նկատում ենք Իջևանի շրջանի բնակչության 1931 թ. մարդահամարի տվյալներից, բնակչության բնական աճի տեմպերը թեև դանդաղ, բայց պահպանվել են, իսկ որոշ բնակավայրերի պարագայում՝ նույնիսկ նկատելի (երկու գյուղական բնակավայր՝ Աչաջուրը և Սևքարը, բնակչության թվով նույնիսկ գերազանցում են շրջկենտրոն Իջևանին): Վերջին վարչատարածքային փոփոխության արդյունքում շրջանը կրել է նկատելի փոփոխություններ, տարածքը ընդլայնվել է, և վերջինիս են կցված նախկին Բարանայի գավառամասի որոշ բնակավայրեր (Բաղանիս, Դոստլու, Կոթիգեղ, Կոշկոթան, Ջուջևան, Ոսկեպար)[2], ուստի 1926 թ. մարդահամարի արդյունքների համամետությունը չի կարող ապահովել շրջանի բնակչության աճի, էթնիկական տեղաշարժերի հստակ պատկերը: Այս մարդահամարի և կենտրոնական իշխանությունների իրականացրած ամենակարևոր որոշում-պարտադրանքներից մեկը բնակավայրերի թուրքական անվանումների փոխարինում էր հայկական տեղանուններով: Միայն Իջևանի շրջանում փոխվեցին 10 բնակավայրերի անվանումներ, և այսուհետև պետական բոլոր տեսակի փաստաթղթերում կիրառելի դարձան հայկական անվանումները: Նախկին Քարվանասարան ևս անվանափոխվեց՝ դառնալով Իջևան, չնայած այն հանգամանքին, որ մինչ այդ այլ փաստաթղթերում, վիճակագրական տվյալներում կիրառվել էր և՛ Իջևան, և՛ Քարվանսարա տեղանունները: 1931 թ. մարդահամարի տվյալների համաձայն Իջևանի շրջանի բնակչությունը կազմում էր 24495 մարդ, որոնց ճնշող մեծամասնությունը կամ 99.5 %-ը կամ 24391 կազմում էին ազգությամբ հայերը, և միայն 0.5 %-ը կամ 104 անձ հավաքական առումով ներկայացնում էին արևելասլավոնական ազգերը, որոնց ճշնող մեծամասնությունը ազգությամբ ռուսներ էին, չնայած այն հանգամանքին, որ ներկայացված վիճակագրական տվյալները հավա-

---

[1] Նույն տեղում, էջ 4: Համաձայն հիշատակված մարդահամարի՝ Խորհրդային Հայաստանի առկա բնակչության թիվն անցել էր մեկ միլիոնից և կազմում էր 1.050.663 մարդ:

Տե՛ս նաև Սարգսյան Հ., Էթնոժողովրդագրական գործընթացները Խորհրդային Հայաստանում (1922-1939 թթ.), Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2019, N 9, էջ 102:

[2] ՀԽՍՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը 1935 թ-ի նոր սահմաններում և ըստ 1931 թ-ի մարդահամարի, էջ 33:

քական առումով ներկայացնում էր ռուսների, ուկրաինացիների և բելոռուսների ներկայացվածությունը[1]: Սլավոնական ազգերի ներկայացուցիչները բնակվում էին շրջանի միայն 6 բնակավայրում[2], իսկ Իջևանում վերջիններիս թիվը 21 էր: Ծխերի կամ ընտանիքների թիվը շրջանում անցնում էր 4700-ից (ավելի հստակ՝ 4726), որոնցից յուրքանչյուրում ապրում էր միջինում 5.2 մարդ[3]:

Ինչպես 1936 թ. լույս տեսած վիճակագրական տեղեկատուի, այնպես էլ Զավեն Կորկոտյանի կազմած ցանկերում[4]՝ 1931 թ. դրությամբ Իջևանի մշտական բնակչությունը կազմում է 2547, որից 2526-ը ազգությամբ հայ, իսկ 21-ը՝ ռուս: Ինչպես տեսնում ենք, բնակչության տարեկան աճը կազմում է 286 մարդ կամ 12.6 % (տարեկան աճը 2-2.5 %): Ծխերի կամ ընտանիքների թիվը Իջևանում կազմում էր 529, իսկ արական և իգական սեռի բնակչության բացարձակ համամասնությունը կազմում էր 1315 արական և 1232 իգական սեռի ներկայացուցիչ[5]: Իջևանյան մեկ ընտանիքում միջին հաշվով բնակվում էր 4.8 անձ, ինչը 0.4-ը պակաս է շրջանային ցուցանիշից:

Հետաքրքրական է ազգությամբ ռուսների թվական աճը, որը պայմանավորված էր նոր իշխանության մարմինների ձևավորման և պետական, արհեստավարժ կուսակցական ծառայողներով շրջանները համալրելու խորհրդային կենտրոնական իշխանությունների վարած քաղաքականությամբ[6]:

Ինչ վերաբերում է թուրքական (ադրբեջանական) ծագում ունեցող բնակչությանը՝ ապա ինչպես նախորդ, այնպես էլ այս մարդահամարի

---

1 Նույն տեղում, էջ 3:

2 Նույն տեղում, էջ 33:
104 արևելասլավոնական ազգությունների ներկայացուցիչներից 42 բնավում էին Վերին Աղդանում, 27-ը Թալայում, 21-ը Իջևանում, 9-ը Իջևանգէսում, 3-ը Լալիգյուղում, 2-ը Ուզունթալայում:

3 Նույն տեղում:

4 Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.), էջ 120-121:

5 ՀԽՍՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը 1935 թ-ի նոր սահմաններում և ըստ 1931 թ-ի մարդահամարի, էջ 33:

6 Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.), էջ 120-121:

արդյունքներով, Իջևանի գավառամասում, (այնուհետև՝ Իջևանի շրջանում) մահմեդական ազգությամբ մշտական բնակչություն չկար: Այս հանգամանքը նաև որոշակիացնում է այսօր բավական արդիական անկլավների հիմնախնդիրը և վիճակագրական տվյալների, մարդահամարների համեմատության արդյունքում միանշանակ կարող ենք ասել, որ սկսած 1922 թ-ի վիճակագրական տեղեկատուներում Իջևանում և շրջանում թուրքական ծագմամբ բնակչություն չկա, այսինքն Բարխուդարլու և Սուֆուլու անկլավները ձևավորվել են մինչ 1922 թ.:

1935 թ. ՀԽՍՀ Ժողովրդական տնտեսության հաշվառման վարչության կողմից հրատարակվեց "Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով» գիրք-տեղեկատուն[1], որտեղ մանրամասնորեն արդադարձված է Խորհրդային Հայաստանի բոլոր ձեռքբերումներին, տնտեսական, մշակութային, քաղաքական առաջընթացին: Այս գրքում անդրադարձ է կատարվում Խորհրդային Հայաստանի ժողովրդագրական պատկերին, շրջանների և քաղաքների բնակչության համեմատական աճին: Ըստ այս աղբյուրի՝ Խորհրդային Հայաստանի բնակչությունը 1936 թ. նախնական հաշվարկով կազմելու էր 1187000[2] և բնակչության աճը 1922 թ. համեմատությամբ կազմում էր ավելի քան 52 %: Նույն հաշվարկմամբ՝ Իջևանի շրջանի բնակչությունը կազմում էր 27770, իսկ Իջևան քաղաքատիպ բնակավայրինը՝ 3470[3]: 1931 թ-ի 2547-ի փոխարեն Իջևանի բնակչությունը կազմեց 3470[4], իսկ բնակչության բացարձակ աճը՝ 923 մարդ կամ 36 %: Այս կտրվածքով Իջևանի բնակչության տարեկան աճը 1931-36 թթ-ն ընկած ժամանակահատվածում կազմում էր 185 մարդ կամ 7,2 %:

Հաջորդ համամիութենական մարդահամարն անցկացվեց 1939 թ. հունվարի 17-ին, չնայած այն հանգամանքին, որ դեռևս երկու տարի առաջ՝ 1937 թ-ին ևս անցկացվեց մարդահամար, որի արդյունքները ԽՍՀՄ ղեկավարության կողմից ընդունվեցին որպես թերիրականացված: Այդ մասին "Խորհրդային Հայաստան» օրաթերթը նշում է, որ «նկատի ունենալով, որ 1937 թ. հունվարի 6-ին ազգաբնակչության համա-

---

[1] "Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Յերեվան, 1935:

[2] 1936 թ-ի վիճակագրական թիվը ձևավորված է ըստ 1931 թ-ի սեպտեմբերի բնակչության հաշվառման կայֆիցենտի:

[3] "Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 20-23:

[4] Նույն տեղում:

միութենական մարդահամարը ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական-տնտեսական հաշվառման կենտրոնական վարչության կողմից կատարվել է վիճակագրական գիտության տարրական հիմունքների ամենախորը խախտումով... ԽՍՀՄ ԺողԿոմԽորհը մարդահամարի կազմակերպումը ճանաչեց անբավարար և մարդահամարի նյութերը թերի»[1]: 1939 թ. մարդահամարը իրականացվեց հունվարի 17-26-ը[2]՝ տասնօրյա կտրվածքով և համաձայն "Խորհրդային Հայաստան» օրաթերթի իջևանյան թղթակցի՝ «Իջևանի շրջանը կազմ ու պատրաստ դիմավորում է մարդահամարին»[3], ըստ որի՝ Իջևանի կուսակցական շրջանային կոմիտեն դեռ 2 ամիս առաջ հատուկ խումբ պատրաստեց (61 հաշվարարներ և 11 հրահանգիչներ) և ուղարկեց գյուղերը՝ աշխատանքները կազմակերպելու համար:

Որոշ ուսումնասիրողներ կիսում են այն կարծիքը, որ 1939 և 1989 թթ. մարդահամարներն իրականացվեցին քաղաքական և տնտեսական աննպաստ պայմաններում, «եթե առաջինը կայացավ ստալինյան բռնությունների ժամանակ, ապա երկրորդը համընկավ Սպիտակի երկրաշարժի և Ղարաբաղյան շարժման տարիների հետ»[4]: Ինչ վերաբերում է տարածքային մանրամասն հետազոտությանը, ապա այս առումով կարող ենք որոշակի վերապահումներով վերաբերել 1939 թ. մարդահամարի տվյալներին, բայց լայն կտրվածքով այն եզակի վիճակագրական պատկեր ապահովող փաստաթուղթ է, որը որոշակիացնում է ժողովրդագրական շարժընթացների հիմնական պատկերը ինչպես Իջևանի շրջանում,

---

1 "Խորհրդային Հայաստան», 27.IX. 1937, էջ 1:

2 Տե՛ս Հրահանգ ԽՍՀՄ պետպլանին կից ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության 1939 թ. համամիութենական մարդահամարի թերթը լրացնելու մասին : Հաստատված է ԽՍՀՄ ԺողկոմԽորհի կողմից 1938 թ. հուլիսի 26-ին / Պատասխանատու խմբագիր՝ Գ. Աբելյան : ԽՍՀՄ ԺողկոմԽորհ. - Յերևան : Տպարան Պետհամալսարանի հրատարակչության, [1938]. – 24 էջ:
Մարդահամարի տվյալներով՝ երկրի բնակչությունը կազմել է 170,6 մլն մարդ, այդ թվում՝ քաղաքայինը՝ 56,1 մլն մարդ (33%): Մարդահամարի նյութերի մշակումը մեքենայացվել և իրականացվել է 15 ամսվա ընթացքում երեք հատուկ մեքենահաշվիչ կայաններում: Համառոտ արդյունքները հրապարակվել են 1939-1940 թթ-ին: Վերջնական արդյունքները հրապարակվել են առանձին ցուցանիշների համար 1947-1949 թթ. Մարդահամարի ամբողջական արդյունքները հրապարակվել են 1990-ականների սկզբին:

3 "Խորհրդային Հայաստան», 17.I. 1939, էջ 3:

4 Սարգսյան Հ., Տավուշի մարզի բնակչությունը 19-21-րդ դարի սկզբների (Էթնոժողովրդագրական ուսումնասիրություններ), էջ 42:

այնպես էլ Իջևան քաղաքատիպ բնակավայրի պարագայում: 1939 թ. մարդահամարը մեզ հետաքրքրող պատկերը տրված է աղյուսակում[1].

Բնակչության համամիութենական մարդահամար 1939 թ. ԽՍՀՄ միութենական հանրապետությունների շրջանների, քաղաքների և խոշոր գյուղերի բնակչության ազգային կազմը Հայկական ԽՍՀ, Իջևանի շրջան			
Ազգությունը	*Թվաքանակը*		
	Ամբողջ շրջանը	*Իջևան (շրջկենտրոն)*	*Մնացած գյուղերը*
Ամբողջը	22600	4426	18234
Հայեր	21942	4062	17880
Ռուսներ	438	283	155
Ուկրաինացիներ	77	7	70
Բելոռուսներ	10	0	10
Վրացիներ	11	10	1
Ադրբեջանցիներ	94	20	74
Թաթարներ	18	3	15
Մորդովներ	6	0	6
Գերմանացիներ	31	27	4
Հրեաներ	3	2	1
Օսեթներ	11	8	3
Լեզգիներ	9	2	7
Ասորիներ	1	0	1
Քրդեր	6	0	6
Լիտվացիներ	1	1	0
Լեհեր	2	1	1

Իջևանի շրջանի բնակչության թիվը, համաձայն 1939 թ. մարդահամարի, կազմեց 22660[2], և ի տարբերություն նախորդ՝ 1936 թ. 27770-ի

[1] http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=864
РГАЭ РФ (быв. ЦГАНХ СССР), фонд 1562, опись 336, Д.Д. 966-1001 ("Национальный состав населения по СССР, республикам, областям, районам"), Д.Д. 256-427 (табл. 26 "Национальный состав населения районов, районных центров, городов и крупных сельских населенных пунктов").

[2] Численность населения СССР на 17 января 1939 г. : по районам, районным центрам, городам, рабочим поселкам и крупным сельским населенным пунктам. — М. : Госпланиздат, 1941. с. 222.

նվազումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՀԽՍՀ ԺողԿոմ-Խորհի 1937 թ. դեկտեմբերի 31-ի որոշմամբ Ալավերդու և Իջևանի շրջանի մի շարք գյուղերի շրջանավորմամբ՝ ձևավորվում էր Նոյեմբերյանի շրջանը, որի կենտրոն էր դառնում Նոյեմբերյան՝ նախկին Բարանա գյուղական բնակավայրը: Իջևանի շրջանը, ինչպես նաև Իջևանը, ունեցավ որոշակի բնական աճի դրսևորում, առավել հետաքրքրական է էթնիկական պատկերի փոփոխությունը, ինչը պայմանավորված է շրջանի ինդուստրացման, արտադրական-գործարանային ենթակառուցվածքների ձևավորմամբ[1]: Իջևանի 4426 բնակչից 4062 կամ 92 %-ը կազմում էին հայերը, իսկ ռուսների թվաքանակը (283) աճել էր 1931 թ-ից հետո 13 անգամ և կազմում էր բնակչության 6,4 %-ը, իսկ այլէթնիկ բնակչությունը կազմում էր ընդամենը 1,8 %-ը (81): 1931 թ-ի 2547-ի փոխարեն Իջևանի բնակչությունը 1939 թ-ի դրությամբ կազմեց 4426 մարդ, բացարձակ աճը կազմեց 1879 մարդ կամ 74 %: Այս կտրվածքով Իջևանի բնակչության տարեկան աճը 1931-39 թթ-ն ընկած ժամանակահատվածում կազմում էր 235 մարդ:

Եզրակացություն

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Իջևանի ժողովրդագրական պատկերը 1920-30-ական թթ-ին ունեցել է շեշտված առանձնահատկություններ և յուրաքանչյուր մարդահամարի տվյալներով բնակչության աճը նկատելի է: Իջևանի բնակչության բացարձակ աճը 1931-1939 թթ-ին կազմեց 1879 մարդ կամ 74 %: Այս կտրվածքով Իջևանի բնակչության տարեկան աճը 1931-1939 թթ-ն ընկած ժամանակահատվածում կազմեց 235 մարդ:
2. Քաղաքային և քաղաքատիպ բնակչության թվաքանակի և համամասնության արագ աճը, որն ուղեկցվում էր քաղաքային բնակավայրերի ցանցի ընդլայնմամբ, սերտորեն կապված էր Իջևանի տնտեսության փոփոխությունների հետ: ՆԷՊ-ին հաջորդած տնտեսության

---

[1] “Լենինյան ուղիով», 26.III.1967.

Ինդուստացմանը քաղաքականության արդյունքում 1930 թ-ին Իջևանում հիմնադրվում է շրջանի առաջին արտադրական ձեռնարկությունը՝ Իջևանի փայտամշակման կոմբինատը:

վերականգնման և տնտեսության արդյունաբերականացմանը զուգընթաց մեծացավ Իջևանի վարչա-արդյունաբերական նշանակությունը և 1930-ական թթ-ին բնակավայրի բնակչության նկատելի աճը պայմանավորված էր շրջանային գյուղերից և խորհրդային այլ հանրապետություններից մասնագիտական համակազմի տեղափոխման և աշխատանքային գործուղման ծրագրերի հետ:

3. Իջևանի ժողովրդագրական ցուցանիշների աճի առանձնահատկություններից շեշտելի է այլէթնիկ խմբերի ներկայացուցիչների աճը, որը պայմանավորված էր Հանրապետության և շրջանի արդյունաբերական միգրացիայի (հարկադիր միգրացիա) աճող մասշտաբներով: Նոր վերաբնակիչները, հաճախ հարկադիր միգրացիա քաղաքականության արդյունքում հաստատվելով Իջևանում, հիմնականում աշխատում էին արդյունաբերական և արտադրական տեխնոլոգիական ձեռնարկություններում: Համաձայն 1939 թ-ի մարդահամարի Իջևանի 4426 բնակչից 4062 կամ 92 %-ը կազմում էին հայերը, իսկ ռուսների թվաքանակը (283) աճել էր 1931 թ-ից հետո 13 անգամ և կազմում էր բնակչության 6,4 %-ը, իսկ այլէթնիկ բնակչությունը կազմում էր ընդամենը 1,8 %-ը (81):

Բանալի բառեր՝ *Իջևան, ժողովրդագրություն, շարժընթաց, մարդահամար, քաղաքային և գյուղական բնակչություն, էթնիկական տեղաշարժեր, բնական աճ, ինդուստրացում:*

ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА ИДЖЕВАНА В 1920-1930 - Е ГОДЫ

Владимир Погосян, Ашхен Мкртумян

Ключевые слова: *Иджеван, демография, динамика, перепись населения, городское и сельское население, этнические сдвиги, естественный рост, индустриализация.*

После установления советской власти сформировались определенные предпосылки для развития периферийных, приграничных населенных пунктов республики, и в этом плане была отмечена важность новых принципов административного деления, в которых учитывались преимущественно экономические и демографические факторы.

В первые годы советской власти был проведен ряд переписей-в 1922, 1926 гг., которые отразили изменения численного и социального состава населения республики. Далее, база данных переписей 1937, 1939 гг. и методические вопросы демографических исследований были вытеснены из научных и печатных журналов, и в этом смысле картина 1930-х годов конкретизирована в данных. Целью изучения демографической составляющей процесса урбанизации Иджевана является выявление тенденций и закономерностей демографического роста населения Иджевана, опираясь на результаты переписи населения 1920-30гг.

Проведенное исследование дает возможность изучить тенденции демографического развития Иджевана в 1920-30 гг. и ввести в научный оборот фактические материалы и анализы, содержащие новизну роста, численности, естественного и механического движения населения, пола, возраста и национального состава населенного пункта городского типа.

Демографическая картина Иджевана в 1920-30-е гг. имела акцентированные особенности, и по данным каждой переписи населения заметен рост населения. Из особенностей роста демографических показателей Иджевана следует отметить рост числа представителей этнических групп, обусловленный растущими масштабами промышленной миграции Республики и региона (вынужденная миграция).

THE DEMOGRAPHIC PICTURE OF IJEVAN IN THE 1920-30'S

Vladimir Poghosyan, Ashkhen Mkrtumyan

Key words: *Ijevan, demography, trend, census, urban and rural population, ethnic movements, natural growth, industrialization.*

After the establishment of the Soviet power, certain preconditions were formed for the development of the peripheral, border settlements of the republic, and in this regard, new principles of administrative division were emphasized, in which economic and demographic factors were taken into account.

In the first years of Soviet power, a number of censuses were conducted in 1922, and 1926, which reflected the changes in the numerical and social composition of the republic's population. Further, the data base of the census of 1937, as well as 1939 and the methodological issues of demographic research were pushed out of scientific and press journals, and in this sense, the picture of the 1930s is a concrete data. The purpose of the study of the demographic component of the urbanization process of Ijevan is to reveal the trends and patterns of the

demographic growth of the population of Ijevan, based on the results of the censuses in the 1920-1930s.

The conducted research provides an opportunity to study the trends of the demographic development of Ijevan in the 1920-1930s, and to put into scientific circulation the factual data and analyzes containing the growth, number, natural and mechanical movement, sex, age and national composition of the population of the urban settlement.

The demographic picture of Ijevan in the 1920s and 30s had pronounced some features and the population growth is noticeable according to the data of each census. If should be added in this connection, that one of the features of the growth of the demographic indicators of Ijevan is largely conditioned by the growth of representatives of non-ethnic groups, which, to some extent, was caused by the growing scale of the industrial migration also known as forced migration of the Republic and the region.

Վլադիմիր Պողոսյան - ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս

Владимир Погосян *- соискатель кафедры Всеобщей истории ЕГУ, преподаватель кафедры Истории Армении и социальных наук иджанского филиала ЕГУ*

Vladimir Poghosyan *- applicant of YSU Chair of World History, lecturer at the Chair of Armenian History and Social Sciences, Ijevan Branch YSU (vladimir.pogosyan@ysu.am) 094 335735*

Աշխեն Մկրտումյան *- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս*

Ашхен Мкртумян *- преподаватель кафедры Истории Армении и социальных наук иджанского филиала ЕГУ*

Ashkhen Mkrtumyan - lecturer at the Chair of Armenian History and Social Sciences, Ijevan Branch YSU (a.mkrtumyan@ysu.am) 098 259997